ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի 160-Ա/1 հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովի որոշմամբ

Մրցույթի ծածկագիրը՝ «ԱՍՀՆ-ԴՄ-ՏԽՎ-24/6»

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նաև պատվիրատու), որը գտնվում է ք. Երևան Կառավարական տուն 3 հասցեում, հայտարարում է դրամաշնորհի հատկացման մրցույթ, որը կազմակերպվում է armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը սահմանված կարգով կառաջարկվի կնքել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Սույն մրցույթի անցկացման կարգը, հայտ կազմելու ու ներկայացնելու պայմանները ինչպես նաև մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպություններին ներկայացվող պայմանները սահմանված են հրավերով:

Մրցույթին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15 -րդ օրվա ժամը 17:30-ը: Սույն հայտարարությունը էլեկտրոնային armeps (www.armeps.am) համակարգում հրապարակվելու օրը հրապարակվում է նաև պատվիրատուի՝ https://www.mlsa.am/?cat=142 հասցեով գործող պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրը ժամը 17:30-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար ՝ Լիանա Մկրտչյանին:

Հեռախոս 094 926 777

Էլ. փոստ liana.mkrtchyan@mlsa.am

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հ Ր Ա Վ Ե Ր

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«ԱՍՀՆ-ԴՄ-ՏԽՎ-24/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Եթե Դուք գրանցված չեք www.armeps.am էլեկտրոնային համակարգում, սակայն ցանկություն ունեք մասնակցել սույն մրցույթին, ապա հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ինքնագրանցվել նշված համակարգում: Գրանցվելու պայմանները սահմանված են www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված «Մասնակցի կողմից էլեկտրոնային (ARMEPS) համակարգի գործածման» ուղեցույցում:

Միաժամանակ՝

- հայտը armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված «էլեկտրոնային եղանակով դրամաշնորհային մրցույթի կազմակերպման» ուղեցույցով:

- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս կարող եք դիմել պատվիրատուին, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով (հեռախոս (+374 11) 28-93-20):

Համակարգում գրանցվելը, ինչպես նաև հայտ ներկայացնելն անվճար է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Դրամաշնորհի տրամադրման հիմնական պայմանները, այդ թվում՝ բյուջեն
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և մասնակիցներին ներկայացվող որակավորման տվյալների չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5.Ֆինանսական նախահաշվի կազմման ձևը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը, քննարկման կարգը և գնահատման չափանիշները, հայտերը մերժելու պայմանները
8. Պայմանագրի կնքումը
9. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

ՄԱՍ II.

1. Ընդհանուր դրույթներ
2. Մրցույթի հայտի պատրաստման հրահանգը
3. Հավելվածներ 1-4

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն *«ԱՍՀՆ-ԴՍ-ՏԽԿ-24/6»* ծածկագրով անցկացվող դրամաշնորհի հատկացման մրցույթի (այսուհետև՝ մրցույթ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի N 1937-Ն (ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 97-Ն որոշմամբ կատարված փոփոխություններով և լրացումներով) որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին համապատասխան և նպատակ ունի մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու մրցույթի պայմանների անցկացման, հաղթող մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու մրցույթի հայտի պատրաստմանը:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները (այսուհետ՝ նաև մասնակից):

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am հասցեով գործող կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Սույն մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ « liana.mkrtchyan@mlsa.am*»*

ՄԱՍ I

1. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲՅՈՒՋԵՆ

1.1 Մրցույթի շրջանակում նախատեսվում է հաղթող մասնակցին անհատույց և անվերադարձ տրամադրել դրամական հատկացում:

Դրամական հատկացման բյուջեն կազմում է ***11 561 600 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր)*** ՀՀ դրամ՝ 28 շահառուի համար:

Չափաբաժինների համարները	***ԳՄԱ կոդ /CPV***	***«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»***	
		Ամսական շահառուների թիվ	***Դրամական հատկացման գումար /ՀՀ դրամ/***
Լոտ 1	99999999/637	*18*	*7 432 457*
Լոտ 2	99999999/638	*10*	*4 129 143*

1.2 Դրամաշնորհի տրամադրման առաջադրանքը ներկայացված է հրավերի N 4 հավելվածում:

1.3 Սույն մրցույթը կազմակերպվում է ՀՀ կառավարության 27.01.2021թ. թիվ 97-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության հիմքով, պայմանով, որ կնքվելիք պայմանագրով սահմանված կողմերի իրավունքները և պարտականությունները կգործեն այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագիր կնքելու օրվանից:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ): Ցուցակը հրապարկված է www.minfin.am հասցեով գործող կայքում: Կազմակերպությունն ընդգրկվում է ցուցակում, եթե՝

1) որպես հաղթող հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է կնքված պայմանագրով ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պետական մարմնի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Եթե կազմակերպությունը ցուցակում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի ***2-րդ մասի 2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն***:

2.3 Սույն մրցույթին մասնակցելու համար մասնակիցը (կազմակերպությունը) պետք է բավարարի հետևյալ նվազագույն որակավորման տվյալների չափանիշներին.

1) Ծառայություն տրամադրող կազմակերպությունը պետք է համալրված լինի համապատասխան մասնագետներով,

2) Ծառայություն տրամադրող կազմակերպությունը պետք է ունենա սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ,

3) Ծառայություն տրամադրող կազմակերպությունը սոցիալական ծառայություններ տրամադրելու նպատակով հավաստագրված լինի՝ ՀՀ կառավարության 10.09.2015 N 1078-Ն որոշմամբ սահմանված կարգով:

2.4 Որակավորման տվյալների չափանիշների գնահատման համար մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում-Հայտարարություն՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Ֆինանսական նախահաշիվ՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Դրամաշնորհային ծրագրի առաջարկ՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Մասնագետների ինքնակենսագրականներ:

5) Հումանիտար աջակցության կամ սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր:

6) Հավաստագրի պատճեն:

2.5 Մասնակիցները կարող են մրցույթին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն մրցույթին ներկայացնել առանձին հայտ: Սույն ենթակետի պահանջը չպահպանելու դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործելու բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին.

4) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կարգի 22-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հանձնաժողովից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն տասն օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու սույն հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և պատվիրատուի https://www.mlsa.am/?cat=142 հասցեով գործող պաշտոնական ինտերնետային կայքի՝ հայտարարություններ բաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը համակարգի միջոցով ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ քան յոթ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը հրապարակվում են համակարգում և պատվիրատուի պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:
Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը համակարգում և սույն բաժնով նախատեսված կայքում հրապարակվելու օրվանից:
Սույն բաժնի համաձայն՝ մրցույթի հրավերում փոփոխություն կատարվելու դեպքում պատվիրատուն չի կրում հրավերում փոփոխություն կատարելու հանգամանքով պայմանավորված՝ մասնակցի կողմից կրած վնասի ռիսկը:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն մրցույթին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ դրամաշնորհային մրցույթի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «15»-րդ օրվա ժամը «17:30»-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝ հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման տվյալների չափանիշների պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

2) իր կողմից հաստատված ֆինանսական նախահաշիվ.

3) իր կողմից հաստատված ծրագիր, որը համապատասխանում է սույն հրավերով սահմանված նպատակներին և առաջնահերթություններին

4) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու պայմանները սահմանված են սույն մասի 2.5 կետում:

4.4 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՎԸ

5.1 Ֆինանսական նախահաշվի կազմման ձևը ներկայացվում է սույն հրավերի N 2 հավելվածով:

Ընդ որում ֆինանսական նախահաշվի ընդհանուր գինը չի կարող գերազանցել սույն մասի 1.1 կետով նախատեսված բյուջեն:

6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Կարգի 27-րդ կետի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն մրցույթի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «15»-րդ օրվա ժամը «17:30»-ին:

7.2 Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն):

7.3 Հանձնաժողովի անդամը, հրավիրված փորձագետը (մասնագետը) կամ քարտուղարը չեն կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ հայտ է ներկայացրել այնպիսի մասնակից, որին անդամակցում է տվյալ կամ վերջինիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ հայտ է ներկայացրել վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին)

ունեցող կազմակերպությունը կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը, հրավիրված փորձագետը (մասնագետը) կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Սույն կետում նշված անձինք ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը կցվում է մրցույթի ընթացակարգի մասին արձանագրությանը: Այն անձինք, որոնք հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն կետում նախատեսված հայտարարությունները:

7.4 Հանձնաժողովի անդամները հայտերի բացման նիստում որոշված ժամկետում, որը չի կարող պակաս լինել երեք աշխատանքային օրից, սույն հրավերով սահմանված կարգով գնահատում են մրցույթի մասին հայտերը և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով մրցութային առաջարկների վերաբերյալ եզրակացություն են տալիս ու ստորագրում և քարտուղարին են փոխանցում գնահատման թերթիկների մեկական օրինակները: Սույն կետով նախատեսված ժամկետը չի կիրառվում, եթե հայտերի բացման նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն որոշմամբ հայտերի գնահատման համար սահմանվում է դրանից պակաս ժամկետ:

7.5 Հայտերի գնահատումը իրականացվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝

1) ներկայացված ծրագիրը հիմնավորված է, համապատասխանում է սահմանված նպատակներին և առաջնահերթություններին (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10).

2) ծրագրի խնդիրները հասանելի, չափելի ու իրատեսական են և համապատասխանում են դրված նպատակներին, ծրագրի պլանավորումն իրատեսական է և հնարավոր է դարձնում դրված խնդիրների իրականացումը (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10).

3) նախանշված է ծրագրի ազդեցությունը, իրատեսական շարունակելիության ձևը և (կամ) կայունության ապահովման մեխանիզմները (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10).

4) ապահովված են ծրագրի առավելագույն տեսանելիության և արդյունքների տարածման մեխանիզմները (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10).

5) ծրագիրը համահունչ է մասնակցի կանոնադրական նպատակներին և խնդիրներին (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10).

6) ծրագրում ներգրավվող աշխատանքային ռեսուրսների մասնագիտական փորձառությունը բավարար է ծրագրի նպատակները և խնդիրներն իրականացնելու համար (վատ՝ 1-3 միավոր, ընդունելի՝ 4-6 միավոր, շատ լավ՝ 7-10):

7.6 Դրամաշնորհի ծրագիրը մասնակիցների կողմից համաֆինանսավորման եղանակով իրականացնելու առաջարկության դեպքում ֆինանսական մասով նախապատվությունը տրվում է այն մասնակցին, ով առաջարկում է ծրագիրն իրականացնելու համար ներդնել առավել մեծ ծավալի ֆինանսական միջոցներ:

7.7 Մասնակցի հայտը գնահատվում է հետևյալ կերպ.

Սույն մասի 7.5 կետում նշված յուրաքանչյուր չափանիշին առավելագույնս համապատասխանող առաջարկը գնահատվում է մինչև այդ չափանիշի մասով նույն կետով սահմանված առավելագույն միավորով:

Այդ չափանիշի մասով մնացած հայտերը գնահատվում են (տրվում են համապատասխան միավորներ)՝ համեմատելով լավագույն առաջարկի հետ:

Կազմակերպությունը, որին սույն հրավերով սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր, ընտրվում է սույն հրավերով սահմանված պահանջներին բավարարող և 7.5 կետում նշված չափանիշների մասով առավել բարձր միավոր հավաքած և 7.6 կետով սահմանված նախապատվության տրամադրման մեթոդով:

7.8 Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովն ընդունում է որոշում այն կազմակերպության մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր, և այն կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի (որոնց) հետ չի կարող կնքվել նման պայմանագիր: Մրցույթի արդյունքների ամփոփման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրության, սույն մասի 7.3 կետով նախատեսված հայտարարությունների և այն կազմակերպության ներկայացրած հայտի պատճենները, որի հետ կարող է կնքվել պայմանագիր, հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

7.9 Սույն հրավերով սահմանված պահանջներին ոչ համապատասխան ներկայացված հայտերը մերժվում են:

7.10 Հանձնաժողովի նիստերը դռնփակ են և կարող են անցկացվել նաև հեռավար:

Մասնակիցը կարող է պահանջել և երկու աշխատանքային օրվա ընթացքում ստանալ իր հայտի գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

7.11 Քարտուղարը հանձնաժողովի անդամներին և մրցույթի մասնակիցներին պետական մարմնի անունից՝ կից գրությամբ ուղարկում (տրամադրում) է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը՝ այդպիսի պահանջ ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7.12 Հայտերի գնահատումը և հաղթող մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

7.13 Հաղթող մասնակցի վերաբերյալ հանձնաժողովի որոշումը ղեկավարի կողմից հաստատվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների:

8 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

8.1 Հաղթող կազմակերպությանը պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով՝ նույն օրը համակարգի միջոցով այդ մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկելով ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

8.2 Եթե կազմակերպությունը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում իր կողմից հաստատված պայմանագրի երկու օրինակը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

8.3 Պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է կազմակերպության կողմից հաստատված պայմանագրի օրինակները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում և նույն օրը մեկ օրինակը վերադարձվում է պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությանը:

8.4 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած կազմակերպությունը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

8.5 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

9. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

9.1 Կարգի 32-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) ոչ մի հայտ չի ներկայացվել.

3) Կարգի 34-րդ կետով նախատեսված դեպքերում պետական մարմնի ղեկավարը չի հաստատում հանձնաժողովի որոշումը.

4) պայմանագիր չի կնքվում:

10. Պետք է պահպանվեն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջները:

ՄԱՍ II
ՀՐԱՀԱՆԳ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերի ներկայացման լեզուն՝ հայերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2.3 ծրագրի առաջարկ, որը համապատասխանում է սույն հրավերով սահմանված պայմաններին, նպատակներին և առաջնահերթություններին՝ համաձայն՝ հավելված N 3-ի:

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.4 ֆինանսական նախահաշիվ՝ համաձայն հավելված N 2-ի:

2.5 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հավելված N 1
«ԱՍՀՆ-ԴՍ-ՏԽԿ-24/6» **ծածկագրով**
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
դրամաշնորհային մրցույթին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____-ի կողմից *«ԱՍՀՆ-ԴՍ-ՏԽԿ-24/6»* ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

դրամաշնորհային մրցույթի _____ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ սույն դիմումին կցելով հրավերի 1-ին մասի 2.4 կետում նշված փաստաթղթերը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____.
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____.
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____.
  գործունեության հասցեն

հեռախոսահամարն է՝ _____.
հեռախոսի համարը

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

բավարարում է *«ԱՍՀՆ-ԴՍ-ՏԽԿ-24/6»* ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և պարտավորվում հաղթող մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում կնքել պայմանագիր:

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

_____

Հավելված 2
«ԱՍՀՆ-ԴՍ-ՏԽԿ-24/6» ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1							
1.2							
1.3							
1.4							
	Ընդամենը Ա						
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1							
2.2							
2.3							
2.4							
	Ընդամենը Բ						
Գ	Գործուղում						
3.1							
3.2							
3.3							
3.4							
	Ընդամենը Գ						
Դ	Վարչական ծախսեր						
4.1							
4.2							
4.3							
4.4							
	Ընդամենը Դ						
	Ընդամենը						

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1			
1.2			
1.3			
1.4			
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
1.1.1			
1.1.2			

1.1.3			
1.1.4			
Ընդամենը Ա2			
Ընդամենը Ա			
Ծրագրային ծախսեր			
2.1			
2.2			
2.3			
2.4			
Ընդամենը Բ			
Գ	Գործուղում		
3.1			
3.2			
3.3			
3.4			
Ընդամենը Գ			
Դ	Վարչական ծախսեր		
4.1			
4.2			
4.3			
4.4			
Ընդամենը Դ			
Ընդամենը			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը Կ.Տ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(մրցույթին մասնակից կազմակերպության կամ այլ ընկերությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու ----------

Ծրագրի անվանումը ----------

Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
Աշխատավարձ							
Ա							
1.1							
1.2							
1.3							
1.4							
Ընդամենը Ա							
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1							
2.2							
2.3							
2.4							
Ընդամենը Բ							
Գ	Գործուղում						
3.1							
3.2							
3.3							
3.4							
Ընդամենը Գ							
Դ	Վարչական ծախսեր						
4.1							

4.2							
4.3							
4.4							
Ընդամենը Դ							
Ընդամենը							

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
Աշխատավարձ			
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1			
1.2			
1.3			
1.4			
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**		
1.1.1			
1.1.2			
1.1.3			
1.1.4			
Ընդամենը Ա2			
Ընդամենը Ա			
Ծրագրային ծախսեր			
2.1			
2.2			
2.3			
2.4			
Ընդամենը Բ			
Գ	**Գործուղում**		
3.1			
3.2			
3.3			
3.4			
Ընդամենը Գ			
Դ	**Վարչական ծախսեր**		
4.1			
4.2			
4.3			
4.4			
Ընդամենը Դ			
Ընդամենը			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը Կ.Տ.

Հավելված 3
«ԱՍՀՆ-ԴՄ-ՏԽՎ-24/6» ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» դրամաշնորհային ծրագրի

ԱՌԱՋԱՐԿ

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	
Հապավումը (եթե առկա է)	
Ծրագրի անվանումը	
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն ----------
Ծրագիր ----------
Ժամանակահատված ----------

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1														
2														
3														
4														
5														

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը և կցել կենսագրականները:

Հավելված 4
«ԱՍՀՆ-ԴՄ-ՏԽՎ-24/6» ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ _____ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղ. Երևան «____» 20 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար ---------- (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս գործադիր տնօրեն _____ (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի _____ որոշումը (այսուհետ՝ որոշում), ----------
---
(այսուհետ՝ միջոցառում) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Պայմանագրով նախարարությունը պարտավորվում է միջոցառման իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև _____ (_____) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Միջոցառմամբ նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N N 1 և 7 հավելվածներում: Միջոցառումն իրականացվում է _____՝ ----------:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 80 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 80 %-ը՝ պայմանագրի 9.6.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է միջոցառմամբ նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում միջոցառմամբ սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանագրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է միջոցառման և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել միջոցառման շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառմամբ և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ միջոցառման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունն ըստ պահանջի միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով միջոցառման շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Եթե պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են ոչ պատշաճ, ապա այս դեպքում նախարարության կողմից 4 աշխատանքային օրվա ընթացքում այն վերադարձվում է՝ առկա թերությունները շտկելու և 3 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնելու համար: Այն դեպքում, երբ կազմակերպությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից ներկայացված թերությունները չի շտկում և կրկին ներկայացնում է նույն թերություններով՝ ապա այս դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե միջոցառմամբ սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N N 1 և 7 հավելվածներում նշված միջոցառման չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու, ինչպես նաև 4.3 կետում նշված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված միջոցառման կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2024 թվականի ---------- ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.4. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.6. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.7. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ք. Երևան, կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ ---------- ՀՎՀՀ ---------- Գլխավոր քարտուղար՝	
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունը նշում է միայն այն լրացուցիչ միջոցառումները, որոնք նախատեսված չեն N 7 հավելվածով:

Հավելված N 2
20 թվականի __-ին կնքված
_____պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N__

1. Ընդհանուր տեղեկատվություն

Միջոցառման անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Միջոցառման իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք ներկայացնել շահառուների ցանկը՝ կից հավաստող փաստաթղթերով (մասնավորապես՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշումը կամ ֆունկցիոնալության գնահատման որոշումը)

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	ՀԾՀ	Մարզ	Հասցե	Սեռ	Հեռախոսի համար	Ծննդյան օրը, ամիսը, տարին	Սոցիալական խումբ (Հաշմանդամության խումբ)
1										
2										
3										
4										
5										
6										
.										

իգական _____ հոգի
արական _____ հոգի

Հավելված N 3
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի----------ամսում կատարված ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարների վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4111***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ ծառայություններ	**4213**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**									

Հանձնեց՝
Կազմակերպության գործադիր տնօրեն՝

Կազմակերպություն՝

Հավելված N 4
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

Միջոցառման																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
Լոտ																

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները չեն նշվում, իսկ պայմանագիրը կնքելիս նշվում է կոնկրետ գումարի չափ*

Հավելված N 5
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 2024 թ

Պետության կողմից դրամաշնորհի ձևով _____ կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» , 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Կողմերը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 6
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
(ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1							
1.2							
1.3							
1.4							
	Ընդամենը Ա						
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1							
2.2							
2.3							
2.4							
	Ընդամենը Բ						
Գ	Գործուղում						
3.1							
3.2							
3.3							
3.4							
	Ընդամենը Գ						
Դ	Վարչական ծախսեր						
4.1							
4.2							
4.3							
4.4							
	Ընդամենը Դ						
	Ընդամենը						

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1			
1.2			
1.3			
1.4			
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
1.1.1			
1.1.2			
1.1.3			
1.1.4			

Ընդամենը Ա2			
Ընդամենը Ա			
Ծրագրային ծախսեր			
2.1			
2.2			
2.3			
2.4			
Ընդամենը Բ			
Գ	Գործուղում		
3.1			
3.2			
3.3			
3.4			
Ընդամենը Գ			
Դ	Վարչական ծախսեր		
4.1			
4.2			
4.3			
4.4			
Ընդամենը Դ			
Ընդամենը			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը Կ.Տ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(մրցույթին մասնակից կազմակերպության կամ այլ ընկերությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու ----------

Ծրագրի անվանումը ----------

Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
Աշխատավարձ							
Ա							
1.1							
1.2							
1.3							
1.4							
Ընդամենը Ա							
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1							
2.2							
2.3							
2.4							
Ընդամենը Բ							
Գ	Գործուղում						
3.1							
3.2							
3.3							
3.4							
Ընդամենը Գ							
Դ	Վարչական ծախսեր						
4.1							
4.2							
4.3							

4.4							
Ընդամենը Դ							
Ընդամենը							

Դրամաշնորհառու ----------
Ծրագրի անվանումը ----------
Ծրագրի տևողություն ----------

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
Աշխատավարձ			
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1			
1.2			
1.3			
1.4			
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
1.1.1			
1.1.2			
1.1.3			
1.1.4			
Ընդամենը Ա2			
Ընդամենը Ա			
Ծրագրային ծախսեր			
2.1			
2.2			
2.3			
2.4			
Ընդամենը Բ			
Գ	Գործուղում		
3.1			
3.2			
3.3			
3.4			
Ընդամենը Գ			
Դ	Վարչական ծախսեր		
4.1			
4.2			
4.3			
4.4			
Ընդամենը Դ			
Ընդամենը			

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը Կ.Տ.

Հավելված N 7
20 թվականի __-ին կնքված
_____ պայմանագրի

«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

NN	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	**նկարագիրը**	**կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	➢ Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը,	➢ Ծրագրի սկզբում իրականացվում է կարիքների և կարողությունների գնահատում, գնահատման արդյունքում մշակվում է սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր. ➢ Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրում նախանշվում են շահառուի հետ իրականացվող ծառայությունները. ➢ Չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելու, ինքնուրույն	➢ Ըստ շահառուների թվի սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրերի առկայություն: Շահառուների այցելությունների գրանցում այդ նպատակով պահվող մատյանում. ➢ Կազմակերպությունում հաճախումների պլանի /դասացուցակի/ առկայություն. ➢ Սոցիալ-վերականգնողական	**31.12.2024**	➢ Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունը ներկայացնում է՝ • ամսական հաշվետվություն, այդ թվում շահառուների ցուցակը • եռամսյակային հաշվետվություն՝ կատարված	

		ուսուցանել և զարգացնել անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակություն: ➢ Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Ծրագրի շրջանակներում իրականացվում է	կենցաղավարման հմտություններ ուսուցանելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում իրականացվում են՝ ➢ սեմինարներ հմուտ բանախոսների աջակցությամբ, այդ թվում՝ հաջողության հասած հաշմանդամություն ունեցող անձինք, հատուկ մանկավարժներ և այլ. ➢ չտեսնող անձանց ֆիզիկական պատրաստվածություն (չտեսնող անձանց ինքնուրույն և անվտանգ տեղաշարժվելուն ֆիզիկապես պատրաստելուն ուղղված միջոցառումներ. ➢ սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել շահառուների ընտանիքի անդամներին հաղթահարելու իրենց հարազատի ֆիզիկական խնդրի հանդեպ կարծրատիպերը, վերաբերմունքը, վախերը և	անհատական ծրագրերի իրականացման արդյունքում 70% շահառուների մոտ արձանագրել կարողությունների և անկախ կյանքի հմտություններ աճ. ➢ Շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների ձևավորում. ➢ Շահառուների կարողությունների հզորացում, համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցության ապահովում. ➢ Կարողություններին համարժեք գիտելիքների ուսուցում. ➢ Անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունների ձևավորում.		աշխատանքների արդյունքային որակական ցուցանիշների ապահովման ուղղությամբ: ➢ Հաշվետվությունները ներկայացվում են նախարարություն՝ https://e-request.am/hy հարթակով:	

		տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց (այսուհետ՝ շահառու) սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում և աջակցություն՝ հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները: ➢ Ծառայությունների տրամադրման շրջանակներում կազմակերպությունն առաջնորդվում է «Հաշմանդամությ	պատրաստ լինելու աջակցել նրանց ինքնուրույնությունը զարգացնելու հարցում. ➢ համակարգչային հատուկ ծրագրերի և կենցաղավարման հմտությունների ուսուցում. ➢ էքսկուրսիաների կազմակերպում. ➢ հատուկ մանկավարժի պարապմունքներ, որոնց նպատակն է մանր և խոշոր մոտորիկայի, լսողական ընկալման, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացումը, հավասարակշռության, ճիշտ կեցվածքի, ճիշտ քայլքի, որոշակի ուղղությամբ անշեղ քայլելու հմտությունների զարգացում. ➢ սպիտակ ձեռնափայտի միջոցով տեղաշարժման ուսուցում, որը ներառում է շոշափելի տարրական պատկերներ գծելը, շոշափելի	➢ իրենց խնդիրների և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն. ➢ Շահառուների մասնակցությամբ տարեկան նվազագույնը 2 միջոցառում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը:			

		ուն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով ամրագրված հիմնական սկզբունքներով	քարտեզների կազմելը և կիրառելը, սպիտակ ձեռնափայտի կիրառելը ➢ խորհրդատվություն շահառուների ընտանիքի անդամներին:				
	Ընդամենը						

Լրացուցիչ դրույթներ

- Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի խելամիտ հարմարեցումներ՝ ըստ գնահատված կարիքի:
- Նախընտրելի է ծառայությունը մատուցել նաև մարզերում, ուստի մարզերում և Երևանում գործունեություն իրականացնող մի քանի կազմակերպությունների դիմելու դեպքում, նախապատվությունը առնվազն 1 լոտով կտրվի մարզում գործունեություն ծավալող կազմակերպությանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ